

տիրուհւոյն մերոյ: Զգեղապանձ վայելչութիւնն զինուորեցելոյ եկեղեցւոյս որ արկաւ զիւրեւ ի սրբացուցանելն զՀնգեսինսուրբսն ի տօնի գլխաւոր Առաքելոցն՝ թէ եւ ունիցիմ զԶիշէրոնինն լեզու ճոռտմովէպ, ոչ կարեմ նաեւ ըստ փոքրագունի մասին ճառել Տեառնդ: Քանզի եթէ գրել կամեցայց զոսկեհուն զեղապանձութենէ Գժխոյիս արբիականի, մնայ տակաւին գրելի բազում ինչ զարժանավայել փեսայէ նորին, զօրիօրդաց, եւ զմանկանցն առագաստի, զպարուց եւ զալելուիայից նոցին: Ընդ որս եւ մեք անարժանագոյնքս կցորդեցաք: Ուրեմն, ո՛հ Հայր իմ գերապատիւ, եթէ ստորինս այս եկեղեցի այսքանեաւ շքեղապանձիւ զեղափառութեամբ գերազարդեցեալ է, արդեօք զորպիսիս ամենազմայլելիս ունելոց իցէ զփառան Անդրանկացն եկեղեցի, եօթնաստեղեանն խորան, Սիօնն վերին, յաղթօղն եկեղեցի եւ վայրն երանական, միանդրն հառաչանաց, որոյ ժառանգաւոր լինելոյ՝ Տէր Յիսուս արժանի արացէ զՀայրդ սրբազան, հանդերձ որդեկօքդ մաքրագանիւք, կցորդեսցէ եւ զիս Տէր ձերին աղօթիւք ընդ ձեզ, ամէն:

Նաեւ եթէ գտեսերան բառարանի քոյ, ոչ իցես տուեալ ումեք մինչեւ ցարդ առ ի բերել մեզ, ծանուցանեմ Տեառնդ այսուհետեւ չտալ. զի եթէ Տէր կամեսցի մինչեւ ցլրումն Սեպտեմբերի ամսոյ ելանելոց եմ աստի՛ առ ի դալ այդր, որ եւ Տէր Յիսուս աղօթիւք ձերովք առաջնորդեսցէ մեզ ըստ կամաց իւրոց, Ամէն:

Ամենից սրբակրօն եղբարց համագումարեցելոց ի յոյդմիկ սրբարանի, ըստ արժանապատուութեան իւրաքանչիւրոյ, սէր եւ ողջոյն համանուիրեմ:

Սարգիս եպիսկ. կեսարիոյ կապաղովկ.

Յամի Տեառն 1746, եւ ի Օգոստ. ի 20 ի Հոսով